

որ և ստի երջանիկն Արարիա, Սոչրիք՝ առաջին նաւահանգիստ Հնդկաց, Բուռնայ, Հայրապատ, Մասրաս և Մեյարոշը, Բուռնուշերի (Ֆրնս. գղթ.) Թրևկայար (Տանխարգեան գղթ.), Նեկրաման (Օլանուրզի):

Գ. Աֆրոսի. երբք անգամ Աղեքսանդրիա, յետոյ Մասառուա (Երեթրէա), Ատուա, Սաբայի քաղաք (Աքսուս), Կեօտոք՝ ուր շուրջ երկու տարի կը կենայ իբր արքունի գանձապետ:

Այսբան ճամբորդութեանց մէջէն հաւաքած է ամբաւ տեղեկութիւններ տեղերու, անձերու, բարբերու մասին:

Յատկապէս հետաքրքրական են իր անձնական յարաբերութիւնները եկեղեցական, պետական և այլ երեւելի անձերու հետ, ինչպէս Բենդիկոտոս Ժ. Գ. Ս. Քահանայապետ, Լուգովիկոս Ժ. Ե, Սուլթան Մահմուտ, Նափոլիի թագաւորն և թագուհին, Եթովպիոյ Իթեկէ թագուհի, Վեներապոլիոյ Մոնէնիկոյ տոժը, Իշխան Տորիա (Հոսմի), Քարախաններ՝ ինչպէս Քոլոննա, Քարաֆա, Լամպերթի (յետոյ Բենեդիկոտոս Ժ. Գ. Ս. Քահանայապետ), յետոյ զանազան իշխաններ, նախարարներ ևւն. մանրամասն տեղեկութիւններ Կ. Պոլսոյ Հայ պատրիարքներուն՝ Գեորգի, Զաքարիայի և Իրենց հանած հալածանքներուն. երկար տեղեկութիւն Յակոբ Նալեան Պատրիարքի և անոր Հոսմի Ս. Քահանայապետին հետ ունեցած կրօնական յարաբերութեանց, ինչպէս նաև Աղեքսանդր Վ. Քարաբաշեանի (որ յետոյ կաթողիկոս կ'ըլլայ), Էմիր Պատկերասան Յովհաննէսի (Հոսմի մէջ, ևւն):

Հ. Յ. Թովմաճանի հատորին մէջ ամփոփուած կարեւոր վաւերագրներուն մէջ թանկագին են երկու նամակներ Մխիթար Աբբասոր գրչով, մէկ հատ Ստեփանոս Մեղգոնեան Աբբասորէն, Լուգովիկոս Ժ. Ե-ի ստորագրութեամբ 1769ին Վերսայի պալատէն արուած անցագիր մը, Եթովպիոյ թագաւորական կնքով թուղթեր, պատրիարքական նամակներ, ևւն:

Նոյնպէս մեզի համար թանկագին են իր մանկութեան յիշատակները՝ զորս կը պատմէ, պարզ ու միամիտ ոճով՝ ըլլայ մեր Երանաշնորհ Հիւնաբերին խօսքերու և գործերու մասին, ըլլայ վանական ուրիշ աւանդութեանց այդ նախնական շրջաններուն. տեղեկութիւններ՝ որոնք ընդհանրապէս զանց եղած են Ուխտիս պաշտօնական Ժամանակագրորէական մէջ:

Հ. Յովհաննէս թէեւ ստիպուած աշխարհիկ վիճակի մէջ մնալ, սակայն միշտ անձուկ սիրով կապուած կը մնայ Մխիթարեան ուխտին

և ըստ այնմ ալ եղբայրութեան թուղթ մը կը ստանայ Մեղգոնեան Աբբասորէն, և ամէն առիթով կը թախանձէ մտնել հոն, մանաւանդ երբ չեն յաջողիր յաջորդաբար իր տեղ զրկած Պօղոս և Պետրոս զաւակները քահանայական կոչման մէջ, ինքն իսկ գեղեցիկ կերպով կ'ըսէ. «Յայտ է այս պատմագրովս որ 1733 թովմաճանին մտանելն ի վանս և յետ 5 ամաց պատճառաւ վախճանման հօրն ել ի վանից 1738, և յաշխարհի եղաւ, սակայն իւր սէրն ի վերայ վանից ոչ երբեք նուազեցաւ, և վանս այն ի տեղի իւր ի վանս փափաքէր հասուցանել զմի յորդոցն» երկուքն ևս կոչուած չեն ունենար, ինչպէս ըսինք: 1785 է որ Աբբասայրը իր Ժողովով կը վճռէ իր ընդունելութիւնը Միաբանութեան ծոցը: Հ. Թովմաճան լսելով «Այն օրհնեալ Հ. Վրթանէս Վ. ն, զձայնն աւետեաց, զլուրն զուարճալի, զլուրն կենաց, զլուրն ի քառասուն և եօթն ամաց հետէ ցանկացեալ երբեր»:

Բայց զեւ մեծագոյն ուրախութիւն պիտի ունենար. հրամանաւ Աբբասոր կրկին Կ. Պոլիս մեկնելով գործերու համար շատերուն խրատով որ քահանայ ձեռնագրով՝ ստացաւ Աբբասոր թոյլտուութիւնը և վանք գարձաւ քահանայ՝ իր հետ բերելով իր հարազատ թոռը Յովսէփ Թովմաճան որ եղաւ յետոյ Բագրատունիի ուսուցիչ, Ոսկերեանի և Հոմերոսի թարգմանիչ Հ. Եղիա Թովմաճան մեծ հայագէտը. որու մասին մեծ գուրգուրանքով և հոգեկան անխառն հրճուանքով կը խօսի Հ. Յ. Թովմաճան «առեալ զայն սիրական Յովսէփ թոռն և անտի եկեալ ի Վենետիկ 1787 Նոյ. 29ին, մտին ի վանս» և երբ ան «Աստուծով արժանաւոր եղեւ սուրբ ուխտի կրօնին որ արար 1795 Յունվ. 18ին, արձարծեցաւ սիրտ ծերունի պապոյն Թովմաճանի, որում էր ակնկալեալ 50 ամաց հետէ և բարերար հօրն լցոյց զփափաք սրտին իւրոյ: Այլեւս լցոյց զտեղին ի վանս՝ փոխանակելով թոռն ընդ պապոյն Թովմաճան Տէր մահտեսի Յովհաննիսին»: Մանրամասն ծանօթութեամբ և գովեստով կը խօսի իր միւս թոռան՝ Հ. Եղիայի եղբոր Թովմաս Թովմաճանի մասին՝ որ Վենետիկոյ մէջ յաջողութեամբ կը սորվի նախ լեզուներ յետոյ բժշկութիւն - մանկաբարձութիւն «և այսպէս բուսկիկօ քննութեամբ և հանգիստի ի մէջ պաշտօնատար վարպետաց արժանացաւ առնուլ զտղթթոռական բրէվիլէճիոյ հրամանն կնքով և ստորագրութեամբ վկայելով թագաւորական սանիթայի իշ-